**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

# ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹԻՒՆ

*Վերագրեալ տիտղոսով գիրք մը լոյս ընծայած է Ա. Գ. Աբրահամեան, 1978ին, Երեւան, բաղկացած 314 էջերէ։ Երկարատեւ եւ ծանր աշխատանքի արդիւնք այդ երկը շահեկան եւ հետաքրքրական է մէկէ աւելի կողմերով։ Գրքին ընթերցման ժամանակ հանդիպեցանք մի քանի վերծանումներու, որոնց կ'արժէ անդրադառնալ։ Մեր նկատողութիւնները համառօտակի կը ներկայացնենք ստորեւ։*

1. — էջ 13

*Ծածկագիր* — Ռ, Ռ-ի ւ խ
*սրբագրուած* — Ռ Ս Ի Ի Խ
*վերծանուած* — Ա մ մ է ն
*որ սխալ է եւ ուղղելի*
*Ծածկագիր* — Ռ, Ռ, Ի, Ի, Խ
*վերծանում* — Ռ [= հազար] ամէն:

2. — էջ 69

*Ծածկագիր* — ա ա ռ ք ն ժ |· |||:
*վերծանում* — ա բ ր հ ա մ

*Հեղինակը կը գրէ. «Հաւանականութեան կարգով կարելի է ասել, թէ ծածկագրութեան միջին* բ *եւ* ճ *տառերը փոխարինագիր* ս *եւ* ցն *են, որոնք* ստ[ացող] *բառի առաջին երկու տառերն են կազմում»։ — Այդ վարկածը ընդունելի չէ։ Միջին երկու տառերը* բ *եւ* ճ *եղբայրագիր են,* ա *եւ* յ, *որով ճիշդ վերծանումը կ'ըլլայ* Աբրայհամ։

3. — էջ 88–89

*Հեղինակը կը գրէ. «Ցուցակում՝ ծանօթագրութեան մէջ, սխալմամբ նշւում է, որ ծածկագրութեան մէջ իբրեւ թէ գաղտնագրուած է հետեւեալ նախադասութիւնը. «Եղայ ես յԱնթափայ թվ. ՌՁԱ* (= 1632) *ամին, յունիս ամսուն ԺԲ* (= 12), *օրըն ԳՇ* (= *Երեքշաբթի)»։ Իրականում, ինչպէս կտեսնենք, այդ վերծանութիւնը բացարձակապէս ոչ մի կապ չունի ծածկագրութեան հետ եւ մտացածին է»։*

*Ղալաթիոյ Ձեռ. Ցուցակին մէջ գրուած է.*

«Յիշատակագրութիւն ... *Եղայ ես յԱնթափայ ... օրըն ԳՇ.»։ Այս յիշատակագրութիւնը ստորագրուած է ծածկագրութեամբ (սիւն.* 1184)*։ Ապա երկու սիւնակի վրայ* (1183–4) *տրուած է ծածկագրութիւնը։*

*Տուեալ ծածկագրի մասին Հեղինակը կը գրէ. «Ծածկագրութիւնը կարդացւում է. «Ես Ալեքսանոս աբեղայ ծառայ Ա[ստուծո]յ գրեցի ի թվ. ՌՁԱ* (1632) *յէին»։ — Մեր վերծանութիւնը տարբեր է վերջին մասին համար. «Ես Ալեքսանոս աբեղայ ծառայ Այ.։ Ալեքսանոս Գրիչ»* (Տես *Սիոն,* 1979, *էջ* 262, *թիւ* 7)։

4. — էջ 97

*Ծածկագիր* — կ ր ծ ւ բ տ կ է փ խ տ մ բ
*վերծանուած* — ո ր պ է ս դ ո ւ գ տ ն ի ս

*«Չորրունակութեան մէջ կայ եւ սիւնակէտագիր ծածկագիր, որը դժուարացանք վերծանել»։ — Մեր վերծանութեամբ առաջին մասը կու տայ «Դու գթովմա յիշէս». երկրորդ չվերծանուած մասը կ'աւելցնէ, «Ամ յիշէ քեզ»* (Տես *Սիոն, էջ* 264, *թիւ* 15)։

5. — էջ 97–98

*Ծածկագիր* — ե դ տ լ դ լ տ
*վերծանուած* — գ Գ ր ի գ ո ր

digitised by A.R.A.R.@

«Եզրայրագրի շարունակութեան մէջ կա սինակէտագիր, որը վերծանում է Կարբեցի»

| | |
|---|---|
| չար. փոխ. | ց ռ ռ ի ս ի ս ւ ն |
| վերծանուած | Կ ա ր բ ե ց ի ի ն |

Մեր վերծանութիւնը տուաւ, «Ներելով Թումային քահանային» (Տես Սիոն, էջ 261–2, թիւ 4)։

6. — էջ 165–166

| | |
|---|---|
| Ծածկագիր | Ռ Ի Բ՛ Պ Ռ Խ Տ Ե |
| » | Ա Մ Վ Ս Ր Ի Ս |

վերծանուած Ռաբբի Մեսրովպիս։

Մեր վերծանութիւնը եղաւ քիչ մը տարբեր

Ռաբբի Մեսրովպ խիստ։

| | |
|---|---|
| Ծածկագիր | Թ Է Ա Մ Ո Ս - Ի – Ս Ո Մ Ա Է Թ |
| վերծանուած | Մ Ա Թ Է Ո Ս   Մ Ա Թ Է Ո Ս |
| Ծածկագիր | Ը Դ Վ Խ Տ Ր — Ի — Ր Տ Վ Խ Դ Ը |
| » | Է Դ Ս Հ Տ Ի — Ի — Ի Ց Հ Ա Դ Է |
| » | Ջ Բ Ռ Ի Փ Ռ — Ի — Ռ Փ Ի Ռ Բ Ջ |

վերծանուած է. «ՎՆԸ — Վարդապետը — տխրցւ. գրէլմր. գփառ. բառմս» — «Թովմաս վարդապետը տխրեցաւ գրելս գփառ բառս»։

Մեր վերծանումը ստորև.

| | |
|---|---|
| Ծածկագիր | ը դ վ խ տ ր — ի — ր տ վ խ դ ը |
| Եղբ. | ե ս ր ց   ց ր ս ե |
| Փոխ. | պ տ ո   ո տ պ |
| Խառն. | պ ե ս տ ր ո   ո ր ս տ ե պ |
| Վերծանթ. | Պ ե տ ր ո ս — ի — Պետրոս |
| | |
| Ծածկագիր | է գ ս լ ց ւ — ի — ւ ց լ ս գ է |
| Եղբ. | զ ր ռ ի ր ց   ց ր ի ռ ր զ |
| Փոխ. | կ մ ա ս ո   ո ս ա մ կ |
| Խառն. | կ մ ա ս ր ո   ո ր ս ա մ կ |
| Վերծ. | Մարկոս — ի — Մարկոս |
| | |
| Ծածկ. | զ ր ռ ի փ ռ — ի — ռ փ ի ռ ր զ |
| Փոխ. | ո մ ս ը   ը ս մ ո |
| Եղբ. | ս վ է ս   ս է վ ս |
| Խառն. | ո մ ս վ է ս   ս է վ ս մ ո |
| Վերծ. | Մովսէս — ի — Մովսէս |

Հայերէն ձեռագիրներու մէջ գործածուած ծածկագրերու լուծումը ինքնին հետաքրքրական է, և յաճախ ի յայտ կը բերէ գաղտնագրուած անունը գրչին կամ ստացողին, որ այդ միջոցին դիմած է կեղծարարի մը խարդախութեան զոհ չերթալու համար։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@